

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	11RBD PL 72-03-01
Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ	Խմբագրություն 57	
	Ուժի մեջ է՝ 01.02.2023 թ-ից	
4.3 Առանց Բանկ այցելության՝ առաջնային շուկայից տրանսպորտային միջոցի ձեռքբերման սպառողական վարկ¹		
Նպատակ	Առաջնային շուկայից (ավտոսրահից) նոր տրանսպորտային միջոցի ձեռքբերման նպատակով վարկ՝ առանց Բանկ այցելելու	
Հաճախորդի (համավարկառուի/երաշխավորի) տարիք	18-65 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկառուի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը	
Ռեզիդենտություն	ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք	
Արժույթ	ՀՀ դրամ	
Վարկավորման նվազագույն և առավելագույն սահմանաչափ	3 մլն - 20 մլն ՀՀ դրամ	
Ժամկետ (ամիս)	84 ամիս	
Տարեկան անվանական տոկոսադրույք ներառյալ գույքի ապահովագրությունը	Ճշգրտվող հաստատուն տոկոսադրույքով (տոկոսադրույքը կարող է փոփոխվել սկսած 37-րդ ամսվանից)	
	Հաստատուն բաղադրիչ՝ 7.4% + փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք) https://www.ameribank.am/content.aspx?id=base_information&page=99&itm=retail+1.1&lang=3/	
Տարեկան փաստացի տոկոսադրույք ներառյալ գույքի ապահովագրությունը	17.1-17.13%	
Վարկի տրամադրման միանվագ վճար	Չի սահմանվում	
Նվազագույն կանխավճար	Ձեռք բերվող տրանսպորտային միջոցի արժեքի առնվազն 10%-ի չափով	
Մարման եղանակ	Անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը վճարվում է հավասարաչափ ամսական պարբերականությամբ)	
Գրավադրվող գույքի նկարագրություն	Գրավի առարկա է հանդիսանում ձեռքբերվող տրանսպորտային միջոցը	
Վարկ/գրավ հարաբերակցություն	Ձեռքբերվող տրանսպորտային միջոցի առուվաճառքի արժեքի 90% չափով	
Գրավադրվող տրանսպորտային միջոցի տվյալներ	Ավտոսրահից ձեռք բերվող (չհաշվառված) տրանսպորտային միջոց	
Գրավադրվող գույքի գնահատում	Ավտոսրահից ձեռքբերվող Տրանսպորտային միջոցի գնահատում չի իրականացվում: Որպես գրավադրման արժեք հիմք է ընդունվում ավտոմեքենա իրացնող ընկերության կողմից Բանկին պատկանող էլեկտրոնային համակարգում նշված արժեքը/առուվաճառքի արժեքը:	
Գրավադրվող Գույքի ապահովագրություն	Գրավադրվող տրանսպորտային միջոցների ապահովագրությունն իրականացվում է ամբողջ ժամկետի ընթացքում Բանկի կողմից վարկի մնացորդի չափով:	
Վարկի ձևակերպման վայր	Ավտոսրահ	
Պահանջվող փաստաթղթեր	Վարկային հայտը լրացնելիս պահանջվող փաստաթղթեր	
	Անձը հաստատող փաստաթուղթ, ՀՕՀ	
	Վարկը հաստատելուց հետո պահանջվող փաստաթղթեր	
	Ամուսնության վկայական (առկայության դեպքում) և ամուսնու անձը հաստատող փաստաթուղթ, ՀՕՀ	
	Տրանսպորտային միջոցի գրավի իրավունքի գրանցման վկայական (Բանկին փոխանցվում է ՀՀ Ճանապարհային ոստիկանության կողմից) • Ձեռքբերվող գույքի համար վճարված կանխավճարի՝ անկանխիկ եղանակով վճարված լինելու փաստը հավաստող պատշաճ փաստաթուղթ (օր.՝ բնօրինակ անդորրագիր, իսկ էլ. եղանակով վճարված լինելու պարագայում՝ էլ. վճարումը հաստատված լինելու փաստը հավաստող փաստաթուղթ), որը Հաճախորդից չի պահանջվում, եթե վճարումը կատարվել է Բանկում գործող հաշիվ/ներով և Բանկի մասնագետը ծրագրային արտահանել է տվյալ վճարման փաստաթուղթը: Այլ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում	
Վարկի վաղաժամկետ մարում	Վարկի լրիվ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում վարկի վաղաժամկետ մարման գումար չի վճարվում:	
Տույժեր և տուգանքներ ժամկետանց մայր գումարի և տոկոսի նկատմամբ	Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակում է Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: Տույժ՝ ժամկետանց Վարկի և Տոկոսադրումարի 0.13 %-ի չափով կետանցի յուրաքանչյուր օրվա համար:	
Հաճախորդի կողմից կատարվող լրացուցիչ վճարներ	Պայմանագրերից ծագող իրավունքների (ավտոմեքենայի ձեռքբերման և գրավադրման) պետական իրավասու մարմնում գրանցման վճարներ	
Ավտոսրահի և Բանկի միջև համագործակցության դրույթներ	Ավտոսրահի հետ համագործակցության շրջանակներում կարող են սահմանվել այլ պայմաններ, ներառյալ՝ տարեկան տոկոսադրույք, կանխավճարի նվազագույն չափ, վարկ/գրավ հարաբերակցություն և այլն:	

¹Բանկի և Ավտոսրահի միջև համագործակցության պայմանագրի առկայությունը պարտադիր է:

ՀՀ օրենսդրության համաձայն Հաճախորդի կողմից միակողմանի նախաձեռնությամբ իր հաղորդակցման միջոցը փոփոխելու վերաբերյալ գրավոր դիմում Բանկ ներկայացնելու դեպքում, Բանկն իրավունք ունի փոփոխված հաղորդակցման միջոցը կիրառել նաև հաճախորդի գրավոր դիմումը ստանալուց մինչև 30-օրյա ժամկետը լրանալն իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Ընդ որում, հաղորդակցման միջոցի տարեկան մեկ անգամից ավելի փոփոխությունները կատարվում են Բանկի համաձայնությամբ՝ Բանկի ներքին իրավական ակտերով և սակագներով սահմանված պայմանների պահպանմամբ: